ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

375015. ք. Երևան 15, Գ. Լուսավորչի 13

N 293 «03» ապրիլի 2001 թ.

Երևան քաղաքի տարածքում զուգարան-տաղավարների կառուցման (տեղադրման) բաց մրցույթի արդյունքները հաստատելու մասին

1.Հաստատել Երևան քաղաքի տարածքում զուգարան-տաղավարների կառուցման (տեղադրման) մրցութային հանձնաժողովի 23.03.01թ. հ.2 արձանագրությունը՝ «Դավիթ-Վանուշ» ՍՊԸ-ին Գլխավոր պողոտայում, Մարգարյանի անվան հիվանդանոցի հարևանությամբ զուգարան-տաղավարի կառուցման (տեղադրման) մրցույթում հաղթող ճանաչելու մասին (արձանագրությունը կցվում է):

2.Հանձնարարել

2.1.Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում» ՊՓԲԸ-ին (Ա.Ղազարյան)՝ երկօրյա ժամկետում «Դավիթ-Վանուշ» ՍՊԸ-ի հետ կնքել հատկացված հողատարածքի (36քմ) վարձակալության պայմանագիր, դրանում նշելով վարձակալի ստանձնած պարտավորությունները՝ ըստ մրցութային հանձնաժողովի 23.03.01թ. հ.2 արձանագրության:

2.2.Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը (Ս.Կոտոլիկյան)՝ «Դավիթ-Վանուշ» ՍՊԸ-ին հնգօրյա ժամկետում ապահովել օբյեկտի կառուցման (տեղադրման) համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերով:

3.«Դավիթ-Վանուշ» ՍՊԸ-ին՝ ըստ պարտավորեցման.

3.1.Ապահովել զուգարան-տաղավարի կառուցման ավարտը մինչև ս/թ հունիսի 10-ը:

3.2.Սահմանված կարգով կատարել պայմանագրի նոտարական վավերացումը և սեփականության իրավունքով գրանցումը կադաստրի պետական կառավարման տարածքային ստորաբաժանումում:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի բարեկարգման և շինարարության վարչության (Ա.Սարգսյան) վրա:

5.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի գլխավոր խորհրդական Վ.Վարդանյանի վրա:

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

375015, Երեւան 15, Գրիգոր Լուսավորչի 13

№ 58 18 հունվարի 2002 թ.

Երևանի քաղաքապետի 03.04.2001թ. «Երևան քաղաքի տարածքում զուգարան-տաղավարների կառուցման /տեղադրման/ բաց մրցույթի արդյունքները հաստատելու մասին» հ.293 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Հիմք ընդունելով, որ Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում» ՊՓԲԸ-ի տնօրինության տակ գտնվող, Գլխավոր պողոտային հարող տարածքը /Մարգարյանի անվան հիվանդանոցի հարևանությամբ/ չունի պետգրանցում և հաշվի առնելով «Դավիթ-Վանուշ» ՍՊԸ-ի 2002թ. հունվարի 10-ի 01/1-12 խնդրանքը.

Չեղյալ համարել Երևանի քաղաքապետի 03.04.2001թ. հ.293 որոշման 2.1 կետը և այն շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«2.1 Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչությանը /Ա.Գևորգյան/ հնգօրյա ժամկետում «Դավիթ-Վանուշ» ՍՊԸ-ի հետ կնքել հատկացված հողատարածքի /36քմ/ վարձակալության պայմանագիր, դրանում նշելով վարձակալի ստանձնած պարտավորությունները՝ ըստ մրցութային հանձնաժողովի 23.03.2001թ. հ.2 արձանագրության»:

Ռ. ԳԱԶԱՐՅԱՆ

ՍՈ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

375015, ք. Երևան 15, Գ. Լուսավորչի 13

N 280 «25» փետրվարի 2002 թ.

Փ.Բուզանդի փողոցի և Մաշտոցի պողոտայի ստորգետնյա անցման հարևանությամբ գտնվող հ.276 պաղպաղակի տաղավարի զբաղեցրած հողատարածքի սահմանների ճշտման մասին

Երևանի քաղաքապետին հասցեագրված 19.10.2001թ. հ.1/5846 գրությամբ «Դավիթ-Վանուշ» ՍՊԸ-ի տնօրեն Արսեն Կարապետյանը խնդրել է ճշտել սեփականության իրավունքով իրեն պատկանող հ.276 պաղպաղակի տաղավարի զբաղեցրած հողատարածքի սահմանները: Ա.Կարապետյանը ներկայացրել է 18.02.1997թ. հ.4121 սեփականաշնորհման պայմանագիրը:

Ըստ գեոդեզիական ճշտումների տաղավարի զբաղեցրած հողատարածքի մակերեսը կազմում է 20,8քմ:

Ղեկավարվելով << քաղաքացիական և հողային օրենսգրքերով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 14.01.2002թ. հ.18-09/113 եզրակացությունը.

1.«Դավիթ-Վանուշ» ՍՊԸ-ին պատկանող, տարածքային առաջին գոտում՝ Փ.Բուզանդի փողոցի և Մաշտոցի պողոտայի ստորգետնյա անցման հարևանությամբ գտնվող հ.276 պաղպաղակի տաղավարի զբաղեցրած 20,8քմ մակերեսով հողատարածքը վարձակալական իրավունքով տրամադրել ընկերությանը 10 /տասը/ տարի ժամկետով՝ վարձավճարի չափը սահմանելով տվյալ հողի կադաստրային արժեքի 30%-ի չափով:

2.Սահմանել, որ հողատարածքի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով:

3.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչությանը (Ա.Գևորգյան)՝ Երևանի քաղաքապետի անունից հողօգտագործողի հետ կնքել հողի վարձակալության պայմանագիր:

4.Նախազգուշացնել հողօգտագործողին, որ հողի վարձակալության պայմանագիրը, << քաղաքացիական օրենսգրքի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» << օրենքի 23 հոդվածի համաձայն, ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները 30-օրյա ժամկետում՝ պետական գրանցման << անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի լիազորված մարմնում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության (Ա.Գևորգյան) վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Վ.Վարդապետյանի վրա:

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ